## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N [illegible]-4

ք. Երևան "9" փետրվարի 2015 թ.

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ (այսուհետ՝ Շնորհատու), որը գործում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և <<Ագրոքիմիական ծառայություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը ի դեմս տնօրեն Վ. ՂԱՎԹՅԱՆԻ (այսուհետ՝ Շնորհառու), որը գործում է <<Ագրոքիմիական ծառայություն>> ՊՈԱԿ կանոնադրության հիման վրա մյուս կողմից, (այսուհետ՝ միասին կողմեր) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18 - ի N 1515 – Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) <<Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ>> ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Շնորհառուին հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ <<Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ>> (04.02.01.06.) ծրագրով **70185600** (Յոթանասուն միլիոն հարյուր ութսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Շնորհառուն պարտավորվում է ծրագիրն իրականացնել վերը նշված որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Շնորհառուի կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի N 1 հավելվածում:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1. Շնորհատուն իրավունք ունի՝**

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու Շնորհառուի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2.որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհապաղ վերացման ողջամիտ ժամկետ և Շնորհառուից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը:

2.1.3.առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Շնորհառուն ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու.

բ. Շնորհառուն երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետները նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին:

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

**2.2 . Շնորհառուն իրավունք ունի՝**

2.2.1.իրականացված միջոցառման արդյունքը Շնորհատուի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Շնորհատուի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

**2.3. Շնորհատուն պարտավոր է՝**

2.3.1.ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Շնորհառուին.

2.3.2.կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացված միջոցառման մասին N2 և N4 հավելվածներով սահմանված ձևի ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրին և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Շնորհատուն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Շնորհառուին:

**2.4. Շնորհառուն պարտավոր է՝**

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակում Շնորհատուի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3.կատարել Շնորհատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով Շնորհատուին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին,

2.4.4.1. ոչ ֆինանսական (արդյունքային) ցուցանիշների կատարման վերաբերյալ կազմված եռամսյակային հաշվետվությունները ներկայացնել հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 10 – ը՝ փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվության հետ միաժամանակ, իսկ ծրագրի ավարտից հետո ամփոփ հաշվետվություն՝ հիմք ընդունելով N 2 հավելվածը:

2.4.4.2. փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունները՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը՝ համաձայն սույն պայմանագրի N 4 հավելվածի, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն:

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Շնորհատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.6. Շնորհատուի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Շնորհառուն պարտավորվում է անվճար՝ Շնորհատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

## 3. Մոնիթորինգը.

3.1. Շնորհատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Շնորհատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Շնորհառուին տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4. Շնորհատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Շնորհառուից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

## 4. Վճարման կարգը և ժամկետները

4.1 Սույն պայմանագրով Շնորհատուն պարտավորվում է ծրագրի կատարման համար Շնորհառուին, որպես դրամաշնորհ վճարել **70185600** (Յոթանասուն միլիոն հարյուր ութսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 3 հավելվածին համապատասխան: Ծրագրի գնից 4600000 (չորս միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամը Շնորհատուն փոխանցում է Շնորհառուի բանկային հաշվին, որպես կանխավճար:

4.2. Հաշվետու ամսվա փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ համաձայն N 4 հավելվածի Շնորհառուի կողմից ներկայացված հաշվետվություններն ընդունելուց հետո Շնորհատուն հաջորդ ամսվա վճարման ենթակա գումարը, որպես կանխավճար վճարում է Շնորհառուին:

4.3. Շնորհառուին վճարումները կատարվում են միջոցառումների իրականացման մասին N 2 և N 4 հավելվածներով սահմանված ձևի հաշվետվություններն ընդունվելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ համաձայն N 3 հավելվածի:

## 5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Շնորհառուն պարտավորվում է Շնորհատուին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Շնորհառուին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և

խախտումները վերացնելու պարտականությունից: Շնորհառուն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Շնորհառուին վճարվելիք գումարներից:

### 6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30 – ը կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

### 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է 2 (երկու) օրինակով, 8 էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

### 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Շ Ն Ո Ր Հ Ա Տ Ո Ւ**

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական շենք 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011008258

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Կ.Տ

**Շ Ն Ո Ր Հ Ա Ռ Ո Ւ**

<<Ագրոքիմիական ծառայություն>> ՊՈԱԿ
ք. Երևան, Իսակովի պող. 22ա

<Հայէկոնոմբանկ>

հ/հ 163008158582,
հվհհ 01805817

Կ. ԴԱՎԹՅԱՆ
Կ.Տ.

Հավելված 1
2015 թ. 02 09-ի
կնքված N ԿԲՊՄ-4 պայմանագրի

# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| NN ը/կ | Իրականացվելիք միջոցառումների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | համառոտ բովանդակությունը | կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | վերջնա-ժամկետը | պահանջվող գումարը (հազ.դրամ) |
| 1. | Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացում | 1. Ծրագրի նպատակն է՝<br>Գյուղատնտեսական նշանակության հողերի ագրոքիմիական դաշտային և լաբորատոր հետազոտությունների միջոցով տալ յուրաքանչյուր հողատարածքի բերրիության մակարդակը և մշակել պարարտացման միջոցառումներ, այն բարելավելու և պահպանելու մշակաբույսերի բերքատվության զգալի աճ | Ծրագրվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.<br>1. Գյուղատնտեսական նշանակության հողերի ագրոքիմիական դաշտային հետազոտություններ<br>2. Հետազոտվող տարածքից վերցված հողանմուշներում լաբորատոր փորձաքննության կատարում, որոշելով ազոտի, ֆոսֆորի և կալիումի պարունակությունը հողում<br>3. Փորձաքննության արդյունքների հիման վրա ագրոքիմիական քարտեզների և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրերի կազմում ու հանձնում համայնքներին: Մասնագիտական օգնության իրականացում դրանց ճիշտ կիրառման նպատակով: | Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա հանրապետության համայնքներում ունենալ հողերի սննդատարրերով ապահովվածությունն արտացոլող ագրոքիմիական քարտեզներ և մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրեր, որոնց արդյունքում պարարտանյութերը կօգտագործվեն խնայողաբար և նպատակային: Կբարձրանա հողի բերրիության անկումը, կապահովվի վերարտադրությունը 30 - 40 % - ով, | 30.12.2015 թ. | 70185.6 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կենսայի պարարտանյութերի ծախսը, իսկ մշակաբույսերի բերքատվության աճը կկազմի 20 – 30 %: | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 70185.6 |

**ՇՆՈՐՀԱՏՈՒ**

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

ք. Երևան, Կառավարական շենք 3

ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն

հ/հ 900011008258

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Կ.Տ

**ՇՆՈՐՀԱՌՈՒ**

<Ագրոքիմիական ծառայություն> ՊՈԱԿ

ք. Երևան, Իսակովի պող. 22ա

<Հայէկոնոմբանկ>

հ/հ 163008158582,

հվհհ 01805817

Վ. ԴԱՎԹՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 2
2015 թ. 02 03-ի
կնքված N [illegible]-4 պայմանագրի

## ԾՐԱԳՐԻ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ (ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը — ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի անվանումը — Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ

| Նկարագրությունը | Միջոցառման անվանումը | Չափի միավորը | Նախատեսվում է իրականացնել 2015 թվականի ընթացքում | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | I եռամսյակ | I կիսամյակ | ինն ամիս | տարի |
| 1 | 2 | | | 4 | 5 | 6 |
| Հողերի դաշտային հետազոտություններ, հողանմուշների լաբորատոր փորձաքննություններ, ագրոքիմիական քարտեզների և պարարտացման կիրառման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի կազմում | Կազմված ագրոքիմիական քարտեզների քանակը (համայնքների քանակին համապատասխան) | հատ | 0 | 45 | 105 | 170 |

**Շ Ն Ո Ր Հ Ա Տ Ո Ւ**

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական շենք 3
ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011008258

**Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

Կ.Տ.

**Շ Ն Ո Ր Հ Ա Ռ Ո Ւ**

<Ագրոքիմիական ծառայություն> ՊՈԱԿ
ք. Երևան, Իսակովի պող. 22ա
<Հայէկոնոմբանկ>
հ/հ 163008158582, ՀՎՀՀ 01805817

**Վ. ՂԱՎԹՅԱՆ**

Կ.Տ.

Հավելված 3
2015 թ. 02. 03
Կնքված N ԿԲՊՎ-4 պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.Հիմնարկի անվանումը <Ագրոքիմիական ծառայություն> ՊՈԱԿ

2.Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

| Բաժին | Խումբ | Դաս | Ծրագիր | Նախ |
|---|---|---|---|---|
| 04 | 02 | 01 | 06 | 104007 |

3.Հիմնարկին սպասարկող գանձապետական բաժանմունքի անվանումը
<< ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն

4.Գանձապետական բյուջետային հաշվի համար 900011008373

Ծրագրերի անվանումը Հողերի ագրոքիմիական հետազոտության միջոցառումներ

| Ձեռք բերվող ծառայությունների անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը | Ընդամենը տարեկան | Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեից, այդ թվում | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I եռամսյակ | | | I կիսամյակ | | |
| | | | հունվ. | փետր. | մարտ | ապրիլ | մայիս | հունիս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ | 4637 | 70185.6 | 0 | 4600.0 | 9200.0 | 13700.0 | 18200.0 | 22830.0 |

| Ձեռք բերվող ծառայությունների անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել (շարունակություն) | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ինն ամիս | | | Տարի | | |
| | հուլիս | օգոստ. | սեպտ. | հոկտ. | նոյեմ. | դեկտ. |
| 1 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ | 29830.0 | 36830.0 | 44057.0 | 52700.0 | 60250.0 | 70185.6 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

<< գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Կառավարական շենք 3
<< Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011008258

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ________
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

<Ագրոքիմիական ծառայություն> ՊՈԱԿ
ք. Երևան, Իսակովի պող. 22ա
<ԱյԷկոնոմբանկ>
h/h 163008158582, ՀՎՀՀ 01805817

Վ. ԴԱՎԹՅԱՆ ________
Կ.Տ.

Հավելված 4
2015 թ. 02.09-ի
հրաման N [illegible]-Ա
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

Ձևաթուղթ N 3.2

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ
ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը <<ԱԳՐՈՔԻՄԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>> ՊՈԱԿ
2. Գտնվելու վայրը ք. Երևան, Ծով. Իսակովի 22ա
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման
4. Պետական կառավարման մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանումը ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
5. Հիմնարկը սպասարկող բանկի անվանումը <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ
6. Հիմնարկի հաշվարկային հաշիվը 163008158582
7. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը (1՝ պետական բյուջե 1, համայնքի բյուջե 2)

8. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման Բաժին N, Խումբ N, Դաս N

9. Ծրագրի անվանումը Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումներ
10. Ծրագրի կոդը
11. Պետական կառավարման մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման

12. Չափի միավորը՝ հազար դրամ

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի | | Տարեկան հաստատված նախահաշիվ | Փոփոխություններ տարեկան նախահաշվում | | | Տարեկան ճշտված նախահաշիվ | Ֆինանսավորում | Դրամարկղային ծախս | Փաստացի ծախս | Կրեդիտորական պարտքեր (ժամկետանց) | | Դեբիտորական պարտքեր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | NN | | ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում) | ՀՀ կառավարության (համայնքի ղեկավարի որոշում) | Վերադասի կողմից | | | | | Ընդամենը | որից 30 օրից ավել ժամկետով | |
| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը=Դ+Ե+Զ+Է | Թ | Ժ | ԺԱ | ԺԲ | ԺԳ | ԺԴ |
| 1100000 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում | | | | | | | | | | | | |
| 1150000 | 5.Դրամաշնորհներ | | | | | | | | | | | | |
| 1157100 | Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին | | | | | | | | | | | | |
| 1000000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 1100000+տող 4000000) | | | | | | | | | | | | |

| Նկարագրություն | Միջոցառման անվանումը | Չափի միավորը | Պայմանագրով նախատեսված և փաստացի կատարված | | Շեղման պատճառները |
|---|---|---|---|---|---|
| | | | Պլանային | Փաստացի | |
| | | | | | |
| | | | | | |

«____»____________2015թ.

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ

Կ.Տ.

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ____________ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
«___» ________ 2014 թ.

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 11
## ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ
01.01.2014 թ. - 30.12.2014 թ. ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը <<[illegible]>> ՓԲԸ
2. Փաստացի հասցեն ք. Երևան, [illegible] 22ա
3. Հիմնարկի ենթակայության ծառայի և համակարգի կոդը ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման
4. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տարածքային կառավարման մարմնի անվանումը ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
5. Սպասարկող բանկի անվանումը <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ
6. Հաշվարկային հաշիվ 163008158582
7. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը (ՀՀ պետական բյուջե 1, համայնքի բյուջե 2)

8. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման
Բաժին N 04
Խումբ N 02
Դաս N 01

9. Ծրագրի անվանումը Հողերի ագրոքիմիական հետազոտություն և բերրիության բարելավման միջոցառումներ
10. Ծրագրի կոդը 06
11. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման 104007
12. Չափի միավորը՝ հազար դրամ

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի: Անվանումները | NN | Տարեկան հաստատված տարեկան նախահաշիվ | Փոփոխություններ տարեկան նախահաշվում: ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում) | ՀՀ կառավ. կողմից (համայնքի ղեկավարի որոշում) | Վերադասի կողմից | Տարեկան ճշտված նախահաշիվ | Ֆինանսավորում | Դրամարկղային ծախս | Փաստացի ծախս | Վճարման ենթակա ստանձնած պարտավորություններ: Ընդամենը | Որից 30 օրից անց պարտքեր | Դրամարկղի մնացորդ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը=Դ+Ե+Զ+Է | Թ | Ժ | ԺԱ | ԺԲ | ԺԳ | ԺԴ |
| 1100000 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում | | 62339,3 | | | | 62339,3 | 62339,3 | 62339,3 | 62339,3 | | | |
| 1160000 | 5.Դրամաշնորհներ | | 62339,3 | | | | 62339,3 | 62339,3 | 62339,3 | 62339,3 | | | |
| 1167100 | Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների պետական ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | 62339,3 | | | | 62339,3 | 62339,3 | 62339,3 | 62339,3 | | | |
| 1000000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 1100000+տող 4000000) | | 62339,3 | | | | 62339,3 | 62339,3 | 62339,3 | 62339,3 | | | |

| Նկարագրություն | Միջոցառման անվանումը | Չափի միավորը | Պայմանագրով նախատեսված և փաստացի տարեկան: Պլանային | Փաստացի | Շեղման պատճառները |
|---|---|---|---|---|---|
| Հողերի [illegible] հետազոտություններ, [illegible] ագրոքիմիական քարտեզների [illegible] | Կազմված ագրոքիմիական քարտեզների քանակը (համայնքների քանակին համապատասխան) | հատ | 172 | 172 | |
| | Կազմված ագրոքիմիական քարտեզներից քաղվածքներ | հատ | 72 | 131 | |

ՏՆՕՐԵՆ ____________ Վ. ԴԱՎԹՅԱՆ
ստորագրություն ա.ա.հ.

Կ.Տ.

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ ____________ Լ. ԱՐՍԵՆԱԿՅԱՆ
ստորագրություն ա.ա.հ.